

Դպրոցականների հանրապետական օլիմպիադա

(2017-2018 ուստարի)

Հայ գրականություն

XI դասարան (տևողությունը՝ 180ր.)

Սիրելի՛ մասնակից. հաղթիր՛, և հաղթանակդ նվիրի՛ր գալիք տոնակատարության հերոսներին, որոնց անձնուրաց հավատի ու խիզախության արդյունքում ունենք մեր չքնաղ հայրենիքը, շենացնենք և արժանի լինենք նրանց հետնորդը կոչվելու պատվին:

Սիրով և հավատով՝ Ս. Աբազյան

1. Գրի՛ր Հովհաննես Թումանյանի հայրենասիրական քնարի մասին՝ այն կապելով գալիք տոնակատարության հետ: Ասելիքդ հիմնավորի՛ր Թումանյանի տողերով: Ո՛վ է Թումանյանին անվանել «ամենայն հայոց բանաստեղծ», ի՞նչ իրավիճակում: Շարունակի՛ր՝ Թումանյանի պալատում... 5մ.

2. Վերլուծի՛ր Ավետիք Իսահակյանի «Հայրենի հողը» բալլադը: Ի՞նչ խորհուրդ կտաս հայրենի հողը լքող քո հասակակցին: Իսահակյանի ո՞ր բանաստեղծությունն է գրվել հայրենիքից հեռու՝ կրկին հաստատելով հայրենիքի հավերժության գաղափարը. ի՞նչ խորհրդանիշի ենք հանդիպում այդ բանաստեղծության մեջ: Հայ բանաստեղծներից է՛լ ովքեր են անդրադարձել այդ խորհրդանիշին: 5մ.

3. Ե՛րբ է գրվել Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը: Ինչո՞ւ էր տագնապում Տերյանը: Ի՞նչ համոզում ունի Տերյանը Նաիրի երկրի ապագայի մասին. հիմնավորի՛ր Տերյանի բառերով: Ուրիշ ո՞ր բանաստեղծն ունի նման վերնագրով ստեղծագործություն. ի՞նչ նմանություններ կան այդ ստեղծագործությունների միջև: 5մ.

4. Վերլուծի՛ր Չարենցի «Հեռացումի խոսքեր» և «Տաղ անձնական» բանաստեղծությունները:

Շարունակի՛ր՝ Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի---

Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում..... 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/